

## Հետազոտական աշխատանք

**Առարկա՝** շախմատ

**Թեմա՝** Ուսուցչի կողմից հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն նվազագույն պահանջների յուրացման ապահովումը սովորողների կողմից ուսումնական առարկայի շրջանակում

**Կազմեց՝** Պողոսյան Ռաֆիկ  
Սյունիքի միջնակարգ դպրոց

**Վերապատրաստող  
կազմակերպություն՝** «Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

**Կապան 2023**

## Բովանդակություն

Թեմայի վերլուծություն.....	3
Հետազոտության նպատակը.....	7
Հետազոտական հարցեր.....	7
Հետազոտության մեթոդ.....	8
Փորձնական հետազոտություն.....	8
Եզրակացություն.....	16
Հավելվածներ.....	17

# **Թեմայի վերլուծություն**

«Շախմատ» առարկայի չափորոշիչը ներառում է՝

Շախմատի հայեցակարգը, որում ներկայացված են այն հարցադրումներն ու հիմնադրույթները, որոնք կողմնորոշիչ դեր ունեն կրթության բովանդակության մեջ շախմատի գործառույթները որոշելու, առարկայի ուսումնական նպատակները սահմանելու գործում, առարկայի բովանդակային միջուկը տարրական դպրոցի 2-4 դասարանների համար, ուսումնական գործունեության տեսակները, որոնք ուսուցման գործընթացում ըստ նպատակահարմարության կարող են կիրառվել ուսուցչի կողմից, սովորողների պատրաստվածությունը (գիտելիքներ, կարողություններ և հմտություններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները (տարրական դպրոցի 2-4 դասարանների) ըստ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված երեք մակարդակով՝ IV, III, II շախմատային մարզական կարգերով, որոնք համապատասխանում են՝ IV-նվազագույն, III-միջին, II-բարձր պատրաստվածությանը:

«Շախմատ» առարկայի կրթական նշանակությունը

«Շախմատ» առարկայի ուսումնասիրումը տարրական դպրոցում ունի կրթական մեծ ներուժ, որը պայմանավորված է հետևյալ առանձնահատկություններով.

-Շախմատը նպաստում է սովորողների տրամաբանական մտածողության զարգացմանը:

-Շախմատը զարգացնում և կատարելագործում է սովորողի երևակայությունը, վերլուծական կարողությունները, դրանով իսկ նպաստելով ուսումնական մյուս առարկաների ուսումնասիրմանը:

-Շախմատում դրսևորվում է նպատակին հասնելու համար հետևողական և քրտնաջան աշխատանքի անհրաժեշտությունը, որը նպաստում է աշակերտի հոգևոր աշխարհի ձևավորմանը

-Սպորտի տեսանկյունից շախմատը զարգացնում է աշակերտի կամային որակները, մինչև վերջ պայքարելու, օբյեկտիվ լինելու, ճիշտ գնահատելու, ինչպես նաև արժանապատիվ պարտվելու կարողություններ:

Շախմատը նպաստում է նաև աշակերտի ինքնադրսևորմանը, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորմանը:

-Շախմատը, պարունակելով գիտության, արվեստի և սպորտի տարրեր, աշակերտի մեջ զարգացնում է ինքնուրույն աշխատանքի միջոցով հաջողությունների հասնելու կարողություններ

-Արվեստի առումով այն զարգացնում է աշակերտի ճաշակը, գեղեցիկը ընկալելու և գնահատելու կարողություններ:

«Շախմատ» առարկայի ուսումնական նպատակները

-ձևավորել և զարգացնել աշակերտի մտավոր կարողությունները,

-ձևավորել և զարգացնել աշակերտների ինքնակազմակերպման և ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ,

-զարգացնել աշակերտի ուշադրությունը, երևակայությունը, կամքի ուժը, աշխատասիրությունը, նպատակասլացությունը, համբերությունը,

-զարգացնել աշակերտի հիշողությունը,

-բացահայտել շախմատային օժտվածությամբ երեխաների:

«Շախմատ» առարկայի դասավանդման հիմնական սկզբունքները

-շախմատային կրթության անհրաժեշտությունը բոլոր սովորողների համար,

-յուրաքանչյուր աշակերտի համար հասանելիության ապահովում,

-առարկայի ուսուցմանը սովորողների ակտիվ մասնակցություն,

-առարկայի ուսուցման գործնական ուղղվածությունը:

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

(2-4 դասարաններ)

Գիտելիքներ, կարողություններ, հմտություններ

1.Ա խումբ նվազագույն մակարդ

2.Բ խումբ Միջին մակարդակ (ավելանում են Ա խմբի պահանջներին)

3.Գ խումբ Բարձր մակարդակ (ավելանում են Ա և Բ խմբերի պահանջներին)

Ա մակարդակ

1.1Իմանա շախմատի խաղատախտակը՝ ուղղաձիգներ, հորիզոնականներ, անկյունագծեր: ճանաչի խաղաքարերը և կարողանա դրանք ճիշտ դասավորել շախմատի խաղատախտակին:

## Վերջնարդյունք՝

Պատմել դրվագներ շախմատի ստեղծման մասին, անվանել և ցուցադրել շախմատի ցուցատախտակը, խաղաքարերը:

### Բ մակարդակ

2.1 Կարողանա բոլոր ֆիգուրներով ճիշտ քայլել:

2.2 Իմանա շախմատ խաղի նպատակը, խաղաքարերի մոտավոր արժեքները: 2.3 Կարողանա ճիշտ փոխատեղում կատարել:

2.4 Իմանա զինվորի քայլը՝ վերցնել անցման ժամանակ:

2.5 Կարողանա զինվորը փոխարկել որևէ ֆիգուրով:

2.6 Կարողանա մեկ քայլից մատ անել:

## Վերջնարդյունք՝

Արդյունքում ունենա 4-րդ շախմատային կարգ ունեցողի գիտելիքներ: Իմանա շախմատի խաղատախտակի բոլոր դաշտերի անվանումները: Կարողանա մատ անել մեկ թագուհով և երկու նավակով:

### Գ. մակարդակ

3.1 Իմանա քայլի գրանցումը:

3.2 Իմանա մանկական մատերը:

3,3 Իմանա շախմատային սկզբնախաղերի մի քանի տարբերակներ: 3,4 Կարողանա կիրառել սկզբնախաղի սկզբունքները:

3,4 Իմանա պարզագույն վերջնախաղեր: Կարողանա պարտիան գրանցել ամբողջությամբ: Կարողանա մատ անել մեկ նավակով, երկու փղով: Իմանա խեղդուկ մատի գաղափարը: Իմանա վերջին հորիզոնականի թուլության մասին:

## Վերջնարդյունք՝

Շախմատային խաղի կառուցվածքային միավորների, դրանց կապակցվածության գործառույթների գիտակցված կիրառման ամբողջականության ապահովում:

### Արժեքային համակարգ

Ներկայացվող պահանջներն արտահայտվում են սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի ու գործելակերպի միջոցով: Շախմատի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- Գիտակցի և արժևորի շախմատի դերը երևակայության, տրամաբանական մտածողության, կամային որակների, դժվարին իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունների ձևավորման և զարգացման գործում,

-Գնահատի արդարությունն ու ազնվությունը,

-Կարևորի ուշադիր և կենտրոնացված աշխատանքը,

-Գիտակցի համագործակցված աշխատանքի կարևորությունը:

Այսօր յուրաքանչյուր ուսուցչի համար նոր մարտահրավեր է կրթական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների, հմտությունների առնվազն նվազագույն պահանջների յուրացման ապահովումը սովորողների կողմից

«Ինչպես ուսուցանել»: Ինչպես ընդգրկել սովորողներին կրթական և ճանաչողական ստեղծագործական գործունեության մեջ, որպեսզի նրանք «հայտնաբերեն» երևույթների և գործընթացների նոր հատկություններ և փոխհարաբերություններ, և չակնակալեն կամ չընդունեն դրանք ուսուցչից պատրաստի ձևով: Ուսուցչի գործունեության հիմնական նպատակը վերջնարդյունքի իրականացման գաղափարն է: Այդ համատեքստում հանրակրթական դպրոցի կարևորագույն նպատակ է դառնում ոչ թե սովորողների

«գիտելիքներ ձեռք բերելը» այլ՝ հմտություններ ձևավորելը, ինչը սովորողներին հնարավորություն է տալիս ինքնուրույն հայթայթել անհրաժեշտ տեղեկատվությունը և ակտիվորեն ներգրավվել հետազոտական տարրեր պարունակող ստեղծագործական աշխատանքներում: Այս կապակցությամբ օրակարգային է դառնում՝ ուսումնական գործընթացի մեջ ներդնելու այնպիսի կրթական տեխնոլոգիաներ, որոնք կօգնեն սովորողներին զարգացնել իրենց ինքնուրույն և ստեղծագործաբար սովորելու ունակությունը: Ուսումնասիրելով առաջադեմ կրթական համակարգ ունեցող երկրների փորձը և իմ սեփական դիտարկումները թույլ են տվել եզրակացնելու, որ սովորողները տարբեր են, ունեն ուսումնական հմտությունների ձևավորման տարբեր մակարդակներ՝ տարբեր գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ: Տարբեր են նաև նրանց ուսումնառության ոճերը: Հատկապես դժվար է աշխատել այնպիսի դասարանում, որտեղ հավաքված են ուսումնառության տարբեր ոճեր ունեցող աշակերտներ: Եվ այստեղ օրակարգային է դառնում տարբերակված ուսումնառության



ռազմավարությունների կիրառումը: Նոր չափորոշիչներով ամրագրված կարողությունների ու հմտությունների առնվազն նվազագույն մակարդակը ապահովելու համար իմ դասավանդած 2-4 դասարանում առանձնացրել եմ սովորողներ, որոնք ունեն զարգացած կարողություններ, բարձր առաջադիմություն, որոնք առանց ուսուցչի կարող են նոր թեման յուրացնել, լուծել

շախմատային տրամագրեր , և կան աշակերտներ, որոնք ունեն ավելի թույլ կարողություններ և հետ են մնում մյուսներից : Ես փորձել եմ մշակել մեխանիզմ, որպեսզի ապահովվի տվյալ դասարանի բոլոր աշակերտների առաջընթացը: Առավել առաջադիմող աշակերտների համար կապահովվի ինքնուրույն ուսումնառություն: Նրանց համար նախապես կմշակվեն համապատասխան առաջադրանքներ, կտրվեն հանձնարարություններ, իսկ հետ մնացող սովորողները կքայլեն ուսուցչի հետ համընթաց: Դա հնարավորություն կտա առավել մեծ ուշադրություն դարձնել նրանց կարիքներին: Նոր չափորոշիչների հիմքում ընկած է զարգացնել տարրական դպրոցում սովորողների՝ փոփոխվող, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, դրանք գնահատելու և լուծման ուղիներ ու տարբերակներ գտնելու կարողությունները, խթանել նրանց որոնողական գործունեությունը, զարգացնել բազմատարբերակային (դիվերգենտ), այլընտրանքային, քննադատական և ստեղծագործական մտածողությունը :

## Հետազոտության նպատակը

1. նվազագույն պահանջների յուրացման ապահովումը սովորողների կողմիկրթական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների, հմտությունների առնվազն «Ինչպես ուսուցանել»:

2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն նվազագույն պահանջների ապահովումը սովորողների կողմից կազմակերպել այնպես, որ առաջընթաց արձանագրեն բոլոր սովորողները:

## Հետազոտական հարցեր

1. Ինչպե՞ս կազմակերպել ուսուցումը, որպեսզի ապահովի գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն նվազագույն պահանջների ապահովումը սովորողների կողմից:

2. Ի՞նչ մեթոդների և ուսումնառության ոճերի կիրառումը կհանգեցնի գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն նվազագույն չափորոշչային պահանջների ապահովմանը:

3. Ինչպե՞ս հասնել ցանկալի վերջնարդյունքի:

## Հետազոտության մեթոդ

### 1. Տարբերակված ուսուցման մեթոդ

Տարբերակված ուսուցման մեթոդի ընտրության հիմնական նպատակն է, ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:

Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են: Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով.

- 1, ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները,
2. խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների
3. տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

## **Փորձնական հետազոտություն**

Հետազոտությունը իրականացվել է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Ն.Վանյանիանվան թիվ 5 հիմնական դպրոցում, 4-րդ դասարանում:

Սովորաբար դասարանները բաղկացած են անհավասար զարգացման և պատրաստվածության աստիճանի, տարբեր շահերի եւ ուսուցման նկատմամբ տարբեր վերաբերմունք ունեցող աշակերտներից: Ավանդական ուսուցման ձեւերով ուսուցիչը չի կարող միաժամանակ բոլորինը լինել: Ուսուցիչը պետք է դասին ստեղծի այնպիսի

պայմաններ, որյուրաքանչյուր աշակերտի մոտ առաջընթաց ապահովվի: Ինձ թվում է, որ այս ամենին կարելի է հանգել տարբերակված եւ ինքնուրույն ուսումնառություն ապահովելով: Տարբերակված ուսուցման ժամանակ լավ են զգում եւ՞ ուժեղ, եւ՞ թույլ աշակերտները: Նման մոտեցումը նպաստավոր պայմաններ է ստեղծում սովորողի զարգացման համար եւ նպաստում է նրանց կրթության որակի բարձրացմանը: Հակառակ դեպքում, մեկը ջանք չի գործադրի սովորելու համար եւ չի զարգացնի պոտենցիալները, մյուսը՝ չհաղթահարելով, կզգա մշտական նվաստացում, ամեն քայլին՝ անբավարարություն, մտավոր վախ, ինչը կհանգեցնի զգվանք շախմատ առարկայի նկատմամբ:

Առաջադրանքը պետք է մշակված լինի տվյալ սովորողների կարիքներին համապատասխան : Շիրշիկովայի (Ширшикова 2011) աշխատանքում առանձնացված է տարբերակման համեմատաբար հավասար մակարդակների երեք ուսումնական խմբեր: Խմբերը ձևավորելիս առաջնորդվել են նրա առաջարկած սկզբունքով:

Խումբ Ա աշակերտներ, ովքեր ունեն ցածր առաջադիմություն, ովքեր նոր նյութի ուսուցման ընթացքում զգում են որոշակի դժվարություններ, շատ դեպքերում, լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն, բավարար արդյունքներին են հասնում բավականաչափ երկարատեւ ուսուցումից հետո միայն, ինքնուրույն տրամազեր լուծել չեն կարողանում: Այս խմբի աշակերտները (համեմատաբար թույլ զարգացած կարողություններով) ունեն ծրագրային բացթողումներ, ինքնուրույն կարող են կատարել հեշտ խնդիրի 1-2 քայլերը, ավելի բարդ խնդիրների ժամանակ չեն կողմնորոշվում, չեն կարող գտնել տրված և փնտրվող հնարքների միջև կապերը, չեն գտնում խնդիրների լուծման առանցքային կետերը: Այստեղ այն աշակերտներն են, ովքեր անցյալ տարիներին կամ հիվանդության հետեւանքով հաճախակի բացակայել են, կամ ովքեր մշտապես վատ են պատրաստվել դասերին: Այստեղ կան նաև այնպիսի աշակերտներ, ովքեր կարող են շատ արագ ավելի բարձր արդյունքների հասնել:

Խումբ Բ աշակերտներ, ովքեր միջին տեմպով առաջընթաց են ապահովում, կարող են ստանդարտից փոփոխված կամ առավել բարդությամբ խնդիրների լուծումները ինքնուրույն գտնել, հենվելով ուսուցչի առաջնորդության վրա: Այս խմբի աշակերտները ( միջին ) ունեն ծրագրային նյութի բավարար գիտելիքներ եւ դրանք կարող են օգտագործելմատ մեկ քայլից խնդիրներ լուծելու ժամանակ:

Խումբ Գ («առավել հաջող ուսումնառություն իրականացրած») աշակերտներ, ովքեր արագ են ընկալում, կարող են ստանդարտից փոփոխված կամ առավել բարդությամբ տրամազրերի լուծումները հնքնություն գտնել, օգտագործելով լուծման մի քանի հայտնի մարտավարական հնարքներ: Այս խումբը կազմված է աշակերտներից, ովքեր կարող են լուծել բարդ խնդիրները, առաջադրել եւ հիմնավորել լուծման ռազմավարությունը, մարտավարական հնարքները : Այս աշակերտները շատ արագ և հեշտությամբ իրենց սեփական ջանքերով կամ ուսուցիչի մի փոքր օգնությամբ գտնում են խնդիրների տարբեր լուծման ուղիներ: Հետազոտության առաջին դասին դասարանը բաժանվեց Ա, Բ, Գ խմբերի, յուրաքանչյուր խմբի տրվեց կոնկրետ առաջադրանք:

Բավականին հետաքրքիր էր Գ խմբերի առաջադրանքը, որը աշակերտներին շտարբեր տրամազրեր լուծելու հնարավորություն էր տալիս: Թեև առաջադրանքները կազմվել էին միջին եւ առավելագույն դժվարության, սակայն չէին սահմանափակում աշակերտի գործունեության ոլորտը: Լրացուցիչ տրամազրերը ընտրելիս կարելի էր հաշվի առնել, որ բոլոր աշակերտները պետք է ի զորու լինեն դրանք կատարել, այլապես աշակերտները կկորցնեն ինքնավստահությունը եւ կնվազի ուշադրությունը: Բոլոր աշակերտները պետք է առաջադրանքի կատարման համար ահրաժեշտ գիտելիքներ, կարողություններ եւ հմտություններ ունենան, հակառակ դեպքում ոչ բոլորի մոտ է առաջանալու խմբից խումբ տեղափոխվելու ցանկություն: Աշակերտները իրենք ավելի լավ էին հասկանում, թե որ խմբին են պատկանում: Աշակերտները մեծ ոգետրությամբ լուծում էին տրված առաջադրանքները: Երեխաների աչքերը փայլում էր: Ինձ թվում է, որ այսպես վարած դասը կարող է հասցնել ցանկալի վերջնարդյունքի: Դասի վերջում աշակերտներին տրվում էին տարբեր բարդության հարցեր, ինչը թույլ տվեց եզրակացնել, որ ուսումնառությունը հաջող է ընթացել:

Հետազոտության երկրորդ դասին նախապես աշակերտներին ներկայացվեց դասի նպատակները, հարցադրումների միջոցով վերհիշեցին նախորդ թեմայի կարևոր հասկացությունները: Աշակերտների տեսակետները հիմնավորված էին, փաստարկված: Նրանք ասում էին սահմանումները, այնուհետև դա կիրառում էին օրինակների վրա: Նրանք ակտիվ մասնակցում էին դասին: Ձևավորվել էր փոխադարձ վստահության, փոխըմբռնման դրական մթնոլորտ: Նրանք կատարում էին տված առաջադրանքները: Բայց աշակերտներից մեկը՝ Մ. , որը հետ էր մնում մյուսներից, քանի որ միացել է մեզ

այս տարի, զարմացրեց իր պատրաստվածությամբ և մասնակցությամբ: Աշակերտներն առաջարկեցին նրան տեղափոխել միջին խումբ: Մի գուցե կկարողանա ավելի արագ

առաջընթաց ապահովել: Աշակերտները ավելի լավ են հասկանում, թե իրենքուսումնառության որ աստիճանի վրա են:

Հետազոտության երրորդ դասի սկզբում բանավոր վարժությունների հիման վրա ստուգվեց բոլոր աշակերտների գիտելիքները՝ կանոններին, հատկություններին տիրապետելու աստիճանը, եւ դրանք կոնկրետ խնդիր վարժությունների վրա կիրառելու ունակությունը, բազային գիտելիքների առկայությունը: «Ընտրեք տրված պատասխաններից ճիշտը», «Թվաբանություն շախմատային խաղաքարերով» (Ա խումբ): «Անվանեք այն կանոնը, որով իրականացվեց ձեր կատարած գործողությունը»,

«Կատարեք կիկնակի հարված» (Բ խումբ): «Կանխարգելեք հակառակորդի դիրքային գրոհը», «Սահմանել այստեղ օգտագործվող հիմնական մարտավարական հնարքների սահմանումները» (Գ խումբ): Գ խմբի սովորողները իրենք էին առաջադրում խնդիրների հարցերը: Այնուհետեւ նրանց օգնությամբ բացատրվեց նոր նյութը: Դասի ընթացքում դասարանի բոլոր աշակերտները ներգրավեցին նաև ցուցատախտակի վրա աշխատանքին: Այնուհետեւ յուրաքանչյուր խմբին հանձնարարվեց համապատասխան ինքնուրույն աշխատանքները: Խմբերի անդամները միմյանց հետ զրուցում են նախապես կազմված հարցերի շուրջ: Ձեռավորվել էր փոխադարձ վստահության, փոխըմբռնման դրական մթնոլորտ: Աշակերտները մեծ ոգետրությամբ լուծում էին տրված տրամագրերը: Դասը պլանավորելիս կարևորել էմ ինչպես խմբային, այնպես էլ անհատական աշխատանքի դերը: Կային մոտիվացիայի, ուշադրության կենտրոնացման խնդիր ունեցող աշակերտներ, բոլոր խմբերի աշակերտները ակտիվորեն ներգրավեցին դասապրոցեսի մեջ: Շրջելիս նկատում էի, որ դասի տարբեր փուլերում տարբեր հարցեր էին տալիս մեկմեկու: Բոլորի աշխատանքները վերահսկվում էին, խնդիրները՝ ստուգվում: Վերջում կատարվեց նյութի ընդհանուր ամփոփում: Այս ընթացքում աշակերտները ներկայացնում էին իրենց խմբերում ձևավորված անհատական տեսակետները այս կամ այն տրամագրերի վերաբերյալ: Սա թույլ տվեց անել եզրակացություն, թե որ աստիճանի վրա է այժմ տվյալ աշակերտը: Այս դասի վերջին աշակերտները պատասխանեցին հետևյալ հարցին՝ թե ինչ են արել, ինչու, ինչ

արդյունքի համար: Այնուհանդերձ, կարող եմ ասել, որ բավականին դինամիկ եւ արդյունավետ դաս ստացվեց, ապահովվեց բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությունը դասապրոցեսին: Աշակերտները տեսակետները հիմնավորված էին, փաստարկված, ինչը թույլ տվեց եզրակացնել, որ ուսումնառությունն ընդհանուր առումով հաջողությամբ է

իրականացվել:

Հետազոտության չորրորդ դասին նորից ստուգվեց բոլոր աշակերտների գիտելիքները՝ կանոններին, հատկություններին տիրապետելու աստիճանը, և դրանք կոնկրետ խնդիր-վարժությունների վրա կիրառելու ունակությունը:

Բ խմբին հանձնարարվում է խնդիր, որը ենթադրում է մեկ քայլից մատ:

Գ խմբերին՝ բազմաքայլ խնդիր՝ հետեւելու համար մտքերի ընթացքին, տրամաբանական մտածելակերպին, տվյալներից օգտվելով լուծման պլանը կազմելու կարողությանը:

Ա խմբերին՝ բանավոր կերպով հանձնարարվեց խնդիրներ, որտեղ պետք է «գտնել սխալը»:

Յուրաքանչյուր սովորողի տրվում է առաջադրանքը (հենվելով կարողությունների և գիտելիքների մակարդակի վրա): Եթե աշակերտը չկարողանա ավարտել մեկ խնդիրը, նա կարող է սկսել կատարել մեկ այլ աշխատանք: Մեկ պայման՝ յուրաքանչյուրը պետք է կատարի մեկ առաջադրանք: Իսկ Գ խմբին տալիս եմ բարդ խնդիրներ, քննարկելով դրանք նախօրոք: Աշակերտները այս տրամագրերը լուծում են ինքնուրույն, իսկ Ա խմբերի աշակերտների հետ մենք շարունակում ենք հիմնավորել նյութը հիմնական վարժությունների վրա: Բ խմբի խնդիրների լուծման ճշգրտությունը ստուգվում է դասի ընթացքում: Բոլորը շատ գոհ էին եւ ուրախանում էին, երբ տեսնում էին իրենց աշխատանքի արդյունքները: Երեխաները բավարարվածության զգացում ունեն յուրաքանչյուր ճիշտ լուծում գտածից հետո: Դժվարությունները հաղթահարելով հաջողության հասնելը ուժեղ խթան է հանդիսանում ճանաչողական գործունեությունը մեծացնելու համար: Աշակերտները, ներառյալ Ա խմբերը, վստահ են իրենց ունակություններին, այլևս չեն զգում վախ նոր տրամագրերից, նրանք պարտավորվում են լուծել ավելի բարձր մակարդակի տրամագրեր: Դժվար է անցկացնել այսպիսի

աշխատանքը, բայց ես փորձում էի տեսադաշտից դուրս չթողնել այն աշակերտներին, ովքեր արագորեն սովորում են նյութը և համալրում են իրենց գիտելիքները ավելի բարդ խնդիրների վրա: Հետազոտության հինգերորդ, վեցերորդ դասերին փորձեցինք խմբերի ներսում աշխատել զույգերով: Դասը պլանավորելիս հաշվի էր առնվել այն հանգամանքը, որ շախմատի դպրոցական դասընթացում աշակերտները դժվարանում են երբեմն շատ սովորական տրամագրեր լուծելիս: Դրա համար տրամագրեր ընտրելիս առաջնորդվել էի պարզից- բարդ սկզբունքով: Զույգերով

աշխատանքի ժամանակ նկատեցի, թե ինչպես Բ խմբի մի քանի աշակերտներ մեխանիկորեն են խնդիրներ լուծում, համեմատելով նախորդ խնդիրների լուծումների հետ: Նրանք փորձում են անել առանց պլանավորելու և պարզաբանելու: Մտածեցի, որ նրանց պետք է առաջադրվի սխալներ պարունակող խնդիրներ: Արդյունքում, աշակերտի մտածողական գործունեությունը կակտիվանա, կավելանա ինքնավստահությունը և նրաք ստիպված կկանգնեն «Գործողությունների ընտրության» առջև : Սխալվելը եւ դրա վերլուծությունը կօգնեն վերակենդանացնել դասի աշխատանքը, կակտիվացնի ուսումնառության գործունեությունը: Սեփական փորձից համոզված եմ, որ մարդիկ ավելի լավ են կարողանում հիշել այն, ինչ բացատրում են ուրիշներին: Եվ հենց այդ հնարավորություններն են ստանում աշակերտները, երբ ուսուցիչը հանձնարարում է խմբային կամ զույգերով աշխատանք:

Անհրաժեշտ է ցույց տալ ոչ միայն ստացված պատասխանը, այլ բացատրել քայլի հերթականության կարևորությունը: Թույլ տվեցի աշակերտներին անհամաձայնության դեպքում քննարկել խնդիրը : Սովորողի ակտիվությունը դասարանում զգալիորեն մեծանում է, երբ նա վերցնում է ուսուցչի գործառույթը: Իսկ մեր գերխնդիրն է փոքր քայլերով հասնել հաջողության: Յուրաքանչյուր խնդրի (պարզից-մի փոքր բարդ) լուծման ալգորիթմը մեկից ավել անգամ և դանդաղ կրկնվեց Ա խմբերի համար: Դրանով ապահովելով Ա խմբի համար առաջընթաց՝ հասցնելով նոր, ավելի բարձր մակարդակի : Գ խմբի աշակերտները իրենց խնդիրները լուծում են ինքնուրույն, յուրաքանչյուր խնդրի լուծումից հետո ստուգվում է իրենց աշխատանքը: Այնուհետեւ նրանք ստանում էին լրացուցիչ ռաջադրանք: Նրանք ներգրավվում էին այլ աշխատանքների ստուգմանը, կամ շարունակում էին լուծել խնդիրներ: Ուժեղ սովորողներին կարող են առաջարկվել այնպիսի աշխատանք, որը պահանջում է գիտելիքների և հմտությունների փոխանցում: Անհրաժեշտ է, որ աշակերտները խնդիրներ լուծեն մտածված , հիմնավորված կերպով: Նույնատիպ վարժությունները մեխանիկորեն լուծելով ուժեղ աշակերտներին մոտ մեծացնում է սխալների հավանականությունը, թուլացնում ուշադրությունը: Թույլերը թող հմտանան, իսկ ուժեղները բարդ առաջադրանքներով զարգացնեն



մտածողությունը: Ա խմբի աշակերտները աշխատում էին ուսուցչի ղեկավարությամբ: Բ խմբի հետ կազմում էինք խնդիրների լուծման պլան, իսկ Ա-ի և Բ-ի հետ լուծում այն: Ստեղծված ստեղծագործական միջավայրը հանգեցնում է նրան, որ աշակերտը չի վախենում սխալ անելուց: Նրանց դուր է գալիս առանց շտապելու անել ինքնուրույն աշխատանք: Եվ եթե

զույգերի հետ զրույցում ինչ-որ մեկը , ինչ-որ բան չէր հասկացել, նա կարող էր ևս մեկ անգամ բացատրել իր զրուցակցին չհասկացված մատերը: Սա կարելու փուլ է, քանի որ այն ինչ ասում է աշակերտը ավելի քան մեկ անգամ, ավելի լավ է հիշում: Սա հնարավորություն է տալիս աշակերտին տվյալ խնդրի շուրջ հմտությունները զարգացնելու և իր գիտելիքները ավելի արդյունավետ կիրառելու:

Հետազոտության յոթերորդ դասին նոր նյութը ներկայացվեց աշակերտների օգնությամբ: Աշակերտները կիրառեցին իրենց նախկին գիտելիքները նոր նյութն ընկալելիս, կապ հաստատվեց նորի և հնի միջև: Ավելի հանգամանորեն նախապատրաստվեցին այն աշակերտները, ովքեր դրա կարիքը ավելի շատ ունեին: Հիմնական բացատրությունից հետո Ա խմբի համար կրկնվեց այն ավելի քան մեկ անգամ: Այս դասին ես օգտագործեցի հետեյալ տեխնիկան. ուսուցման բարձր ունակություն ունեցող խումբը ինքնուրույն է ուսումնասիրում նոր նյութը, իսկ մնացածը՝ միասնական ուսուցչի ղեկավարությամբ:

Հետազոտության ութերորդ դասին տրվեցին առաջադրանքներ ինքնուրույն լուծման համար, ապա ներկայացվեցին ճիշտ լուծումները: Աշակերտներին առաջարկվեց ինքնուրույն գտնել սխալ լուծված տրամագրերը, ուղղել դրանք համատեղ ջանքերով: Այսպիսի աշխատանքը աշակերտներին տվեց որոշակի ապահովության զգացում և թեթևացրեց լարվածությունը: Այս դասին մտածեցի ոչ թե ամբողջ խմբին տալ մեկ առաջադրանք, այլ մեկական անհատական առարադրանք խմբերի անդամներից յուրաքանչյուրին: Եկա այն համոզման, որ դասի արդյունավետությունը զգալիորեն աճում է, երբ ուսուցիչը ոչ միայն հետևում է աշակերտների ինքնուրույն աշխատանքին, այլև այդ ընթացքում աշխատում է առանձին անհատների հետ: Խիստ կտրուկ ավելացնում է դասարանում ինքնուրույն աշխատանքը կատարելու ժամանակը՝ աշակերտները աստիճանաբար ընտելանում են ինքնուրույն աշխատելու մեթոդներին: Այս ամենը ներկայացված է դիագրամների միջոցով: Առաջին

դիագրամում ներկայացված է ամբողջ դասարանի առաջադիմության պատկերը:  
Երկրորդ դիագրամում ներկայացված է ամբողջ դասարանի առաջադիմության  
պատկերը արտահայտված տոկոսներով: Այստեղ պարզ երևում է, որ ընդհանուր  
վերցրած դասարանում արձանագրվել է դրական տեղաշարժ:

## Եզրակացություն

Անկացրած հետազոտության ընթացքում (թվով 8 դաս) կատարեցի հետևյալ եզրակացությունները

- կրթական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների, հմտությունների առնվազն նվազագույն պահանջների յուրացմունը ապահովվեց սովորողների
- աշակերտների ճանաչողական գործունեությունը ակտիվացավ: Դասերում չկան անտարբերներ
- առարկայի նկատմամբ բարձրացել է հետաքրքրությունը, երեխաների մեջ կոտրվել է «վախը» առարկայի նկատմամբ
- աշակերտի կարողությունների համապատասխան տրված առաջադրանքը մեծացնում է հետաքրքրությունը նյութի նկատմամբ, բարձրացնում է աշակերտի ինքնագնահատականը

## Հավելվածներ

1. Հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների և օրինակելի ծրագրերի նախագիծ  
[/Շախմատ/https://escs.am/files/files/2020-07-29/d33eb400a09b4db41e1aa052810bc8bf.pdf](https://escs.am/files/files/2020-07-29/d33eb400a09b4db41e1aa052810bc8bf.pdf)  
[https://forum.armedu.am/forum/%4dիոլետա Կոստանյան. \(2017\).](https://forum.armedu.am/forum/%4dիոլետա%20Կոստանյան.2017)
2. Աշակերտների գործունեության կազմակերպման
3. ձեռնարկ:
4. Հայկական կրթական միգավայր, Պաշարների շտեմարան.  
<https://lib.armedu.am/resource/18317>